

ԲԱՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Պոլիտիկոյ համար 10 մր.  
 Տարեկան 5 »  
 Արտասահմանի համար տարեկան 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 Անհիտիկ Վճարելի  
 —) —  
 Գրոքիտիկ եւ յիւն տրուիր  
 —) —  
 Իրանուցեան տողը 20 սան-  
 քիւն է. Երեւանի ան-  
 գամենու համար 20 ՕԼՈ  
 գեղ կըլայ :

# ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲԵՍԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.  
 АДВОКАТЪ

Նախակ եւ գրամ որիկ  
 Խ. Բուրուրուսեան հասցիին

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

## ԶՈՒՐ ԶԱՆՔ

—) —

Այսօր որ կողմ աչք դարձը-  
 նենք մի առանձին կեանք կը  
 Նկատենք հայկական հոգով  
 ստրուկ մասի մէջ, որը դեռ մի  
 քանի տարի առաջ, յեղափոխա-  
 կանի դիմակի տակ ներս էր  
 սպրգել զուտ յեղափոխական  
 մարմիններէ մէջ :

Ինչպէս ամեն ազգի համար,  
 այնպէս և մեզ համար եկան այն  
 սարսափեցող վայրկեանները, ո-  
 ռոնք միշտ սեղի են ունենում,  
 երբ մի ստրուկ ժողովուրդ որոշ  
 մտաւոր և բարոյական բարձրու-  
 թեան հասնելուց յետոյ՝ զգում  
 է իր վիճակից, զգում է իր վի-  
 ջը ճնշող լուծի ծանրութիւնը և  
 որոշում կուր սկսել իրանից ա-  
 լելի զօրեղ ճնշողի հետ իրաւե-  
 լի լայն պահանջներին յարմար  
 մի նոր կեանք ստեղծելու նպա-  
 տակով :

Այդ անհաւատար կուրի մէջ՝  
 սկզբներում միշտ յաղթութիւնը  
 զօրաւոր ճնշողի կողմն է լինում  
 և նա կատարած հարածներ է  
 հարցնում յանդուգն և ազատու-  
 թեան ծարաւով պայպկած  
 ստրուկի գլխին : Աւելի շուտ  
 այդ հարածներէ սարսափե-  
 ցին մեր սուտ յեղափոխականնե-  
 րը և որոշեցին անցնել հակա-  
 առակ բանակը :

Սակայն, նախ քան այդ ուրա-  
 ցողական քայլը անելը, նրանք  
 ուզեցին հասկանալ ժողովրդի  
 տրամադրութիւնը, ուստի մի  
 կողմից շոյեցին կանգուն մնա-  
 ցած յեղափոխական մարմինը,  
 միւս կողմից էլ շատ չափազան-  
 ցրած գոյներով նկարագրեցին  
 յեղափոխութեան միջոցին երե-  
 ւան եկած բոլոր զժգախտու-  
 թիւները, և այդ բոլորը վերա-  
 գրեցին միմիայն գործող յեղափո-  
 խականների արած սխալ քայլե-  
 րին : Այդ պարոնները դիտմամբ  
 կոյր և ազէս ձեւանալով ոչ մի  
 անգամ ժողովրդին չը յայտա-  
 բարեցին որ նոյն զժգախտու-  
 թիւներին հանդիպել են բոլոր  
 ապստամբող ազգերը և նոյն ան-  
 խուսափելի սխալները գործել են

բոլոր ազգերի յեղափոխական-  
 ները իրանց առաջին քայլերում :  
 Այդ խորամանկ տակտիկայով  
 գտան ժողովրդի ընկած և յու-  
 սահատված մասի թոյլ երակը :  
 Այլ եւս ազգադաւ գործունէու-  
 թեան համար հողը պատրաստ էր.  
 սկսեցին ցելտոտել թէ՛ վեհ գաղա-  
 փաւրը և թէ այդ գաղափարի հա-  
 րադատ ու անվեհեր զինուորները  
 որոնք վճռել են մինչև վերջին  
 շունչ առաջ տանել իրանց սկսած  
 կուրը :

Թէ այդ զազրելի գործողու-  
 թիւնը ինչ կատարութեամբ են  
 կատարում մեր սուտ յեղափոխա-  
 կանները որ տապալեն և ցելտո-  
 տեն այն գործը և գաղափարը,  
 որոնց համար դեռ երէկ իբր թէ  
 պատրաստ էին զոհել իրանց  
 կեանքը ու ստացուածքը՝ ար-  
 դէն յայտնի է մեր ժողովրդի  
 լուրջ և բարոյական մասին, որը  
 անշուշտ կարողացած կը լինի Ե-  
 զիպտոսի և Բուլղարիոյ մի քա-  
 նի թերթերը, որոնց անուննե-  
 րը աւելն անգամ՝ փոքր ի շատէ  
 արժանապատուութիւն ունեցող  
 հայի համար ամօթ է :

Այդ հայ կոչուած արարածնե-  
 րը միայն մի բան չէին հասկա-  
 կացել իրանց ազգադաւ գործը  
 սկսած միջոցին :

Այո, չէին հասկացել որ մա-  
 քուր հայ յեղափոխական տարրը  
 աւելի զօրեղ, աւելի տոկուն և  
 աւելի պատրաստված էր, և է,  
 դիմադրելու իրանց առջևը դուրս  
 եկող ամէն մի խոչնդոտի, քան  
 կարող էին երեւակայել բոսֆո-  
 րա-վեներսիական օղում սնված  
 ճիւղիտական գլուխները :

Այսօր, անունով հայ իսկ հոգով  
 և սրտով ստրուկ տաճիկ՝ երբեմնի  
 յեղափոխականները շատ լաւ են  
 զգում որ իրանց թոյնը շատ քիչ  
 է վնասում մաքուր հայ տարրին,  
 գալարվում են, սողում են, եր-  
 բեմն ցատկում և պառաւած օձի  
 պէս ամէն ճիւղ թափում թունա-  
 ւորել ազատութեան ոգին, որ  
 նորից բռնակալների ոտքերը լի-  
 վելով՝ կարողանան խեղճ հային  
 հարստահարել :

Չուր ջանք. հայ ժողովրդի  
 լաւ և մաքուր մասը պարզ կեր-

պով տեսնում է, որ իր առջև ի-  
 նը թէև գոյնզգոյն և փայլուն  
 կաշիով է, բայց և այնպէս թու-  
 նաւոր օձ է, որի գլուխը պէտք  
 է անպատճառ ջախ ախել : Մենք  
 համոզված ենք որ ուրացողների  
 այդ բանակը շուտով կը տապալ-  
 վի ինչպէս տապալվել են իրանց  
 աւելի վտանգաւոր նախորդնե-  
 րը և հայկական մաքուր ու կո-  
 րովի տարրը գլուխը բարձր բու-  
 նած՝ կը դիմէ իր կէտ նպատա-  
 կին :

ՎԱՐԳՈ

## ԻՍԿԱԿԱՆ ՎԱԽԸ

—) —

Ա.

«Ինչո՞ւ վասպուրական» ին պատաս-  
 խանը առնելէ յետոյ Պ. Արփիար սահ-  
 մանագլխէն կանցնի եւ այս անգամ  
 Պարսկաստանի մէջ նոր վախերու  
 խրատելիակով կը փորձէ խրատեցնել  
 յեղափոխութիւնը :

Աննշան երեւոյթներէն ծայրա-  
 յեղօրէն յոռետես գուշակութիւններ  
 հետեւեցնելու տարօրինակ քաղաքա-  
 գիտութիւն մը մշակող Արփիարի  
 գրչէն ելած «Նոր վախ մըն ալ» յօդ-  
 ուածը անակնկալ մը չէր մեզի հա-  
 մար, եւ հասարակական ո եւ է խըն-  
 դիր ուսումնասիրած պահուն, իրա-  
 կան ակներեւ ապացոյցներուն հա-  
 կատարելի իր անձնական կարծիքները  
 հաստատուելու համար փաստեր երկնող  
 հրապարակել մը կրնայ գեռ շատ  
 անհեթեթութիւններ հրապարակ նե-  
 սել : Իսկ մեզի համար տաղտկալի  
 ժամավաճառութիւն մը պիտի ըլլար  
 իւրաքանչիւր անհեթեթութեան քըն-  
 նադատ հանդիսանալ. սակայն խնդ-  
 րին անտեղեակ ընթերցողները ան-  
 ճահ վրդովուցներէ փրկելու համար  
 հարկ կը դասենք համառոտակի պա-  
 տասխանել :

Յօդուածին մէջ բացատրուած բո-  
 լոր երկիւղալի եզրակացութիւննե-  
 րու շարժաթիթն է նախարարական  
 փոփոխութեամբ Կ. Պոլսոյ նախորդ  
 զեպան Միրզա Մոհսին խանի սառ-  
 ւազամ անուանուիլը : Որովհետեւ  
 ըստ Արփիարի «անձնաւորութիւն մը  
 չէ որ անձնաւորութեան մը անզը  
 կանցնի, այլ վարչական գրութիւն  
 մը կը յաջորդէ ուրիշ վարչական  
 գրութեան մը» : Ո՞վ որ Պարսկաս-  
 տան այցելելու տխուր արկածը ու-  
 նեցած է, ո՞վ որ փոքր ի շատէ ծա-  
 նօթ է այդ երկրի կառավարուելու  
 ողորմելի եղանակին, չի կրնար քըր-  
 քիջը զսպել այս սողերը կարողուն :

Յիրաւի գրագիտական շոյալութիւն  
 կրնայ համարուիլ Արփիարի կողմէ  
 «Վարչական գրութիւն» բառերու  
 զործածութիւնը, որակելու համար  
 հոն տիրող ամենախիղճ կարգերու  
 սոսկալի թոհուրոհը :

Կասկածող դարու չեմին վրայ  
 Պարսկաստան դեռ կը ներկայացնէ  
 հինաւուրց Տիգրոնի արքայից ար-  
 քաներու բռնապետական կառավա-  
 րութիւնը : Նահանգներ ու ընդար-  
 ձակ գաւառներ մինչև այսօր վար-  
 ձու կը տրուին խաներու եւ շահա-  
 դէտ ազնուականներու, որոնք իրենց  
 սահմանին մէջ անկախ են, հերիք է  
 որ կեդրոնական կառավարութեան  
 վճարեն որոշեալ տուրքն ու բաժը :  
 Վարձակալ կառավարիչները այս  
 ծախքերը գոցելու եւ որչափ կարելի  
 է խոչոր շահեր արտադրելու համար  
 բնականապէս ծանր հարկերու եւ  
 խիստ հարստահարութեանց կենթար-  
 կին իրենց առժամանակեայ հպա-  
 տակները ու երկրին բարգաւաճու-  
 թիւնը կը խափանեն որ չըլլայ թէ  
 վարձը աւելնայ : Շատ անգամներ  
 վարձակալութիւնը երկար տարիներ  
 միեւնոյն անձի ձեռքը կը մնայ եւ  
 կանցնի անոր ժառանգներուն : այս-  
 պէսով վարձուած նահանգը ժառան-  
 գական սեփականութիւն կը դառնայ  
 վարձակալի սերունդին, որ ի հար-  
 կին մինչև իսկ զէնքով կը պաշտ-  
 պանէ կառավարութեան դէմ իր ստա-  
 ցական իրաւունքները : Այս աւա-  
 տական գրութիւն յաճախ առիթ  
 կուտայ ներքին խռովութիւններու .  
 զրացի խաներու գժտութիւնը Կա-  
 րինալի կոնսուլներու կը փոխուի կամ  
 տիրող վարձակալներու գերզատա-  
 նին մէջ յաջորդութեան պայքարներ  
 կը ծագին : Դեռ տարի մը առաջ Խու-  
 զիսթանի նահանգին մէջ Մուհամ-  
 մարայի վարձակալ շէյխին եղբայրը  
 իր կուսակիցներու խմբով յարձակե-  
 լով եղբորը վրայ սպաննեց զայն ու  
 սեղն անցաւ. իսկ թէհրանի կառա-  
 վարութիւնը անսարբեր ընդունեց  
 կատարուած իրողութիւնը :

Չինուորական կազմակերպութիւն  
 գոյութիւն չունի Պարսկաստանի մէջ,  
 բացի Շահին սակաւաթիւ անձնա-  
 կան բանակէն եւ գլխաւոր քաղաք-  
 ներու մէջ ֆէրաշներու անկարգ խմբ-  
 րէն, որոնք ոստիկանութեան պաշ-  
 տօն կը կատարեն : Երկրին մէջ կող-  
 մը մեծ խռովութիւններ պատահած  
 ատեն միայն զօրաժողով կըլլայ,  
 զինուորները մեծ մասամբ պարտա-  
 ւոր են իրենք հողալ զէնքերին,  
 եւ այսպիսի պարագաներու մէջ շահ-  
 գատէ մը կամ սէրտարը անձամբ կը  
 հրամայէ բանակին, որ զէնքերու  
 ու հազուստներու այլազանութեամբ  
 եւ իր թերի կազմածով աւելի կը

նմանի բարբարոս ասպատակարարի մը :

Արդարութիւնն ալ ամենանախնական դրութեամբ կը զործադրուի հոն . քաղաքական դատաստանագիրք ու օրէնքներ անձանօթ են . դատական բոլոր գործերը կը կարգադրուին շէրիաթի օրէնքով եւ խաներու կամ մայրական վճիռներով : Սարսափելի են մանաւանդ պատժական կանոնները , յանցաւորները առանց երկար հարցաքննութեան կը պատժուին յանցանքին համեմատ անդամատուծեամբ կամ գլխատումով :

Այս վարչական խառնաշփոթութիւն մեծ զարկ տուած է կաշտակերութեան , որու պայտօնական օրինակը կուտան Շահերը իրենց պաշտօնատարներէն մեծաքանակ թուամաններ շորթելով : Պարսկաստանի մէջ ամենափոքր պաշտօնի մը հասնելու համար իսկ անհրաժեշտ է կայաք . որովհետեւ պատճառար մը որ պաշտօնը կաշտով ձեռք բերած է չի կրնար ձրիարար բաշխել իր ստորադաս պաշտօնները : Այսպէսով գերազանցապէս կաշտի երկիր մը դարձած է Իրան , ուր ամենաստորին պաշտօնեան անգամ կաշտակերութեան առիթ չի փախցնիր ըլլայ նոյն իսկ քանի մը շահի : Այս զգուշելի սովորութեան անախորժ տպաւորութիւնը դեռ չեն մոռցած անոնք որ Պարսկաստան ձամբորդած են . իսկ օտար երկիրներու մէջ արգահատելի նմուշներն են պարսկական հիւպատոսները , որոնք արանց ամսական կամ չնչին ոտճիկով մը պաշտօնի կը խրկուին եւ հետեւաբար ստիպուած են անցադիր վաճառելով ու իրենց հըզատակները կեղեքելով ապրուստին հայթայթել :

Բացի քաղաքական այս անպահանուած բանակալութենէն , Պարսկաստանի վրայ կը ծանրանայ եւ ահարկու ազդեցութիւն մը , Ջրադաշտի մոգերուն մահմանական յաջորդներու ազդեցութիւնը , որ ալ անզուպելի դարձած է սղէտ ու կրօնամոլ խուժանի կոյր կամակատարութեան շնորհիւ : Պարսկաստանի Պիրզա , որ չորս տարի առաջ մեռաւ , Տիգրիսի ափերէն կը հրամայէր ամբողջ Իրանին : Իր անհուն ձեռն-

հասութիւնը բացատրելու համար փոքր օրինակ մը բաւական է :

Իր կենդանութեան ատեն թէ՛հրանի կառավարութիւնը եւրոպական ոչէթիի մը յանձնեց Պարսկաստանի թէ՛մպէթիի մենավաճառը : Միրզա հակասակեցաւ այս կարգադրութեան ու երբ տեսաւ որ իր զիմուսներուն կարեւորութիւն չի տրուիր , զայրացած՝ հեռագրական շրջաբերականով մը յայտարարեց թէ թէ՛մպէթիի գործածութիւնը հարամ է : Անմիջապէս զազդեցաւ սպանուիմը եւ նորահաստատ ոչէթին , սպաննացող ահազին վնասէն ստակալով լուծեց պայմանագրութիւնը : Ան ատեն Միրզա երկրորդ շրջաբերականով մը հելալ ըբաւ ազատարուած խոտի գործածութիւնը :

Սակայն պարսիկ կրօնականներու մոլեռանդութիւնը ներքին համոզումի արդիւնք չէ միշտ ու անոնք՝ մեծերը մասնաւորապէս , սկիստիկ ու կենցաղասէր մարդիկ են հասարակութիւնը միշտ սղէտ պահելու եւ անոր կրօնամոլութիւնը իրենց փառքին ու բաղդին բարձրացումին գործածելու խորամանկ քաղաքագիտութեամբ օժտուած : Այս է պատճառը որ կրօնական հալածանքը ընդհանրապէս հարուստ հասարակութիւններու դէմ կուղղուի : Անցեալ տարի Համազանի հրեայ հարուստ տարրին դէմ զայրապին զրգոտմ մը առաջ եկաւ ու գահաժառանգը հոն զրկուեցաւ զօրքով բարեկարգութիւնը վերահաստատելու , բայց դարձեալ հարկ հողաւ սէյթիներու ափը կողիկ գումարներ գնել խուժանի մոլեռանդութիւնը զսպելու համար :

Ջուարճութիւններու ու զեխութեանց անձնատուր թէ՛հրանի արքունիքին նախ ձեռնառու էր այս անհոգ տիրապետութիւնը , որ իրեն հանդիստ վայելքի ժամանակ կուտար : Բայց հեղաշեւտ բարդուող անխիտանութիւնը ալ սկսած էր վերադառնալ իր զոտնալ եւ զէթ գահին ազդեցութիւնը փրկելու համար ճար մը ընել պէտք էր . նասրէտտին շահ իր երկարամեայ թագաւորութեան վերջերը եւրոպայ այցելութենէն ազդուած քանի մը բարեփոխութիւններու ձեռնարկեց . սակայն իր սկզբնական փորձերուն դէմ՝ ամէն-

նորութիւններու հակառակ կղերականութեան ընդդիմութիւնը ստիպեց զինքը շուտ հրաժարիլ իր ցանկութիւններէն :

ԿԱՐԻՃ

ՔՕՂԷՆ ԴՈՒՐՈ

—)(—

Միւթարական երեւոյթ էր որ ժողովուրդէն դուրս ձայն մը եկաւ ուժգնօրէն վար առնել ան սեւ քօղը , որուն ետին ցարգ պահուրտած կը մնային տեղւոյս աղքատախնամին զեղծումները : Իրաւ , առ մարմինը ալ գոյութիւն չունի . բայց անոր կարճատեւ կեանքը միզ կը սուրվեցնէ որ հանրային գործերը վարելու կանչուած անձերը պէտք է լիուրի վաստակութիւնը վայելին ժողովուրդեան :

Այս էջերուն մէջ շատոնց բողոք բարձրացաւ թէ աղքատախնամի վարչութեան մէջ զեղծումներ կան . վառնայի մեր միւս պաշտօնակիցները՝ աններելի կողմնակալութեամբ մը՝ լուռ ու մունջ մնացին . եւ զտնուեցան անհատներ ալ որ մեղադրեցին «Նարժում»ի անկեղծ ու արդար պահանջումները : Հիմակ որ նոյն իսկ այդ վարչութեան անդամները , ճշմարտութիւնն սքօղելու ալ անկարող , կը զիջանին իրենք խոտովանիլ բարեգործական մարմնի մը մէջ կատարուած զեղծումները , երեւակայել դիրքը մամուլի ան ներկայացուցիչներուն որոնք՝ թէեւ ինքնազով անկողմնակալներ՝ ամէնէն պոռացող զեղծումներն իսկ հրապարակելու կը վախնան : Էենք ուղեր խօսիլ «Նարժում»ի ընթացքըն այլապէս իրեն ճակտի շիկնումին վրայ :

Բայց թողունք խնդրին այս կողմը . մեր նպատակն է այս երկտողով հարցնել աղքատա-

խնամի վարչութեան այն անգամներուն որոնք՝ նեղը մտած բացակայի մը վրայ կը բարդեն ամէն պատասխանատուութիւն եւ յանցանք , թէ ինչու՞ իրենց աչքին առջեւ արձակ համարձակ գործուած այդ զեղծումներուն աչք գոցեցին ու թողուցին որ արիւն արցունք թափող խեղճ աղքատ գաղթականին հացը բուրովին անբարոյական գործածութեան մը յատկացուի . ո՞ր էր իրենց խելքը . ինչու՞ չըրողքեցին , չըրմեցին թաղային իշխանութեան , լրագրութեան կամ ուր որ պէտք էր . իրենց այս ուշ մնացած փութկոտութեամբ կը կարծեն արգարացնել ինքզինքնին եւ հանդարտեցնել խոտոված խղճերնին : Բնա՛ւ :

Կը կարծուի թէ նուա՞ղ ծանր է կացութիւնն ան գործիչին որ իր ընկերով սխալ քայլերուն գիտակ , անոր ազգափնաս շահատակութեանցը ծանօթ , անտարբեր դիտող լոկ կը հանդիսանայ Արդարացում չիկա՛յ . եւ բացարձակ կերպով կը յայտարարենք թէ վառնաի աղք . ընկերութեան մէջ գործուած զեղծումներուն՝ բուն յանցաւորին (եթէ իրօք միեւակ ան է յանցաւորը) բացակայութեանը , պատասխանատուն ոչ-բացակայ անդամները են : Հետեւապէս հաշիւ կը պահանջուի անոնցմէ :

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԵՇԱՏԱԿՆԵՐ

—)(—

Մեր բոլոր ֆիզիքական յոգնութիւնը տեղի կուտայ գաղափարականին . դարձեալ իրականութիւնն է որ կը շարժուի մեզի , կը մօտենանք այդ շէնարարական առատ ջուրին , անյագաբար կը խմենք ու կը լուացուինք , եւ որովհետեւ մեր ձիւ-

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻՈՒԿԻ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆԸ (29)

«Իմ ձեզ չը գալուս միակ պատճառը այդ էր . եւ իբր ապացոյց որ ես պարզ եմ ձեզ հետ , անա յանձնուեմ եմ ձեզ այս փոքրիկ ծրարը , որը իմ կողմից անձնական նստակ է մի տիկնոջ (այդ տերտրական որոշումն էր եւ ես այնքան միամիտ էի . որ կարծում էի թէ քաղաքավարի կը գտնվեն եւ չեն բաց անի) . եւ յայտնում ձեզ որ կերթաք իմ տունս եւ այս ինչ անկիւնում պահված կը գտնէք կուսակցութեան կնիքը : Կրկնում եմ որ ես միայն տաճկական յեղափոխական եմ եւ իմ այդ ասածներս գորք շատ շուտով կարող էք հաստատել» :

Այդ խօսքերից յետոյ Մաքսիմովի զէմքը կորցրեց իր նախկին խստութիւնը . իմ անկեղծութիւնը ազդեց նրա վրա . մի քիչ մեղմացաւ եւ փոխ հիւպատոսը :

Սակայն Մաքսիմովը ծպտալով ասեց .

—Բայց ձեր թուրք յեղափոխական լինելն էլ չէ կարող մեղմացնել ձեր վիճակի ծանրութիւնը : Դուք

մեղադրվում էք քաղաքական ամենամանր յանցանքում եւ միջազգային օրէնքների խախտման մէջ . այս ասեց ու ինձ դուրս տարաւ :

Մաքսիմով մի երկուսի ուղեկցութեամբ տարու ինձ եւ փակեց վանդակապատ սենեակի մէջ : Առանց մի խօսք ասելու դուրս գնաց : Սենեակի դուռը չի բացվում փակվեց : Բանտարկված էի , ոչ ազատ մարդ ֆիզիքապէս : Նորից սկսեցի ջղային զբօսանքը խցի մէջ . որոշ բանի մասին մտածել , միաքս կետրոնացնել անկարող էի . մի տեսակ վերացած զբոսութեան մէջ էի գտնվում : Մի ժամից աւել մայրելուց յետոյ , մեքենաբար մօտեցայ դրանք եւ ուղեցի բաց անել : Սակայն դուռը չը բացվեց . պահպանութեան կառավար սից զոչեց բաւական կողմի ձայնով . «նէ՛ իտէյօրսուն» :

Այդ սեղ մի քիչ զգացի բանտում լինելու ծանրութիւնը . աւելի սուր կերպով նոյն իսկ ամենարնական պահանջները կատարելու ազատութիւնից զուրկ լինելու . ձեռք ու ոտքերս թուլացան . մի տեսակ թուլութիւն ընկաւ ամբողջ մարմնիս մէջ . մինչեւ այդ բողոքի սաստիկ լարված նեար-

դերս սեղմվեցին եւ ես կորագլուխ խոնջացած գնացի ընկայ չոր անկողնի վրա եւ առանց ձայն հանելու պարկեցի ու ընկայ մի տեսակ թմրութեան մէջ , որի միջոցին միայն երբեմն երբեմն իմ զլիւսում ծագում էր այս հարցը . —միթէ ազատ չե՞մ :

Այդ կերպ օրը մթնեց , խաւարը ընկաւ սենեակիս մէջ . ես էլ ընկայ իմ խաւար մաքրելի մէջ , որոնք հետզհետէ իմ ապագան պատկերացնում էին սեւ սեւ գոյներով : Վերջապէս խցիս դուռը բացվեց . ներս մտաւ մի հայ ծառայ . առաջս դրեց մի բաժին մակարոն , իբր թէ իւղով ապակված , թիթեղէ ամոնով ջուր եւ մի փոքր մոմ . մոմը վառեց : Երբեմն գաղտնի հանաքներ էր զգում ինձ վրա , ինչ որ ուղում էր ասել . բայց թուրք կառավար դրան մէջը կանգնած , չար հրեատակ պէս զիտում էր հայ ծառայի բոլոր շարժումները . ինձ թուում էր որ հայ տղան ուղում էր մի բան ասել . սակայն ես էլ մի առանձին միջոց չը գործ դրի հասկանալու նրա մտադրութիւնը :

Մտան իր գործը կատարելուց յետոյ դուրս գնաց , դուռը կը բերկի փակվեց . էլի մենակ մնացի :

Կերակրին չը մօտեցայ . բոլորովին ախորժակ չունէի . աչքերս հիմա փոխանակ առատազին , յառել էի ճրագի տատանող լոյսին եւ սուր ֆիզիկալ նայում էի այն միակ կէտին որը իր փոքրիկ լոյսով լուսաւորում էր մտայ սենեակի տարածութեան ամենափոքրիկ կտորը : Այդ փոքրիկ լոյսը հանգստացրեց , կանոնաւորեց խառնաշփոթված ուղեղս . կամաց կամաց սկսեց պայծառ գոյնով ուղեղիս ներքին ծաղեքից երեւան գալ ազատութեան գաղափարը եւ լուսաւորել իմ մտայացած սիրտն ու հոգին . . . :

Սկսեցի կանոնաւոր մտածել , չափել չափիչիւ իմ վիճակի ծանրութիւնը . որոշումներ կայացնել թէ ինչ զիրք պէտք է բռնեմ :

Կամաց կամաց բոլորովին հանգստացայ , նորմալ վիճակ ընդունեցի եւ որոշեցի պակել ու մի լաւ քնել , որ առաւօտեան բոլորովին հանգիստ ու թարմ ուղեղով զարթնէի եւ զիմաստրէի ինձ համար անխուսափելի զէպքերս ու պայմանները : Արդէն մոմն էլ վերջացաւ եւ ես խաղաղ կերպով քնեցի :

(Շարունակելի)

ըր կազմու պատրաստ են, մեզ կապասն մեր ուղեցոյցները, բնական փափագով մը կերկարենք մեր լուսացքը. այն Ս. հոլը, որուն վրայ անեցան ու փայլեցան մեր նախահայրերը, իրեն կը քաշէ ու ձգէ մեր մըտքերը: Աերջապէս վերջին ումպ մըն ալ շուր խմելով Դարունից ակէն, վերջին համբոյր մըն ալ անոր հոգեբուն, մեր քայլերը կողովենք դէպի արեւելահարաւ, դէպի Խիզանի այն բնական ու երկրաբանական բաժանումը որ, Խիզանի աւերակ քաղաքին կը վերաբերի, ուր շինուած է նաև Խիզանի նշանաւոր շէխ ձևալէստինի տուն սեղ ու թէքիէն:

Թէ քանի ժամ կը ճամբորդենք միտքս չէ, այն օրէն ի վեր աաննուչորս տարի անցած է. միայն այն անմոռանալի պատկերը տակաւին դրոշմուած է մտքիս վրայ զոր հայրենի երկրի այդ պատմական վայրերը թողած են իրենց սարբեր նկարներով: Հոս այլ եւս ամեն ըան «Մէհմէտի» խաւարամիտ որդիներով սկսուած է փոխուիլ. հայկական խաչին յաշորդեր է արարական տափակութիւնն ու քրիստոնէութեան նշանաբանին խլամական խոտելի սնամէշութիւններ: Ճամբաներու վրայ սեղանը անցորդաց ձեռքով ձգուած քարեր կան կուտակուած:

Դա իսլամութեան հատաւալաց մէկ նշանաբանն է, որով պէտք է ամէն հատաւացեալ «Սօֆին» ու շէխին ի սրտէ հատաւացող բարեպաշտ, քար մը ձգէ այն քարակարկառի վրայ, ու իր մաղէն կամ զգեստներէն նշանաբան մը կապէ ծառի այն ոտան որ այդ քարի տեղին քովի վեր կայցցուած. հոն պէտք է հաւատացեալ քիւրա ու թուրքը լրջատու մտամոխրուածով կենան բազմատարած. աչքերնին դէպի շէխ ձէլալէտտինի հայր Խաֆիզի գերեզմանը յառած, կաղթեն սրտաբոխ ու ապա երկու ձեռքերնին մօրուքնուն քսելով քթի տակէն կը մըթմըթան անհասկանալի բառեր: Քանի առաջ կերթանք, այնքան իսլամական այդ տարօրինակ ֆանաթիկութեան շերտութեանը կը մօ: Ենանք:

Հաղի մէկ երկու ժամ հեռու ենք Մահմետի զաւկի այդ որջէն, ահա մօրուսաւոր «սօֆի» ներու շարքերն է որ եռ ու վեռումի մէջ կը խլրտան:

Հանդարտ ու լուրջ քայլերով վերջապէս կերթանք կը հասնինք «շէխ ձէլալէտտինի» թէքիէի դուռը: Մեզ կը դիմաւորեն մէկ քանի սօֆիներ ու շէխի վէքիլ-խարճ խալիֆան. մեր ուղեցոյցները կը յայտնեն անոնց ինչ ըլլալին, անմիջապէս խնդիրը ներս կը յայտնուի մեծ շէխ նոր-Մէհմէտին, որ կը հրամայէ հասարակ հիւրերէն տարբեր աչքով մեզ նայիլ. բայց միթէ

մեր սրտերը կրնային հանդարտիլ, երբ կը տեսնայինք որ այդ ամենը հայ ժողովրդի արդար իրաւունքները յափշտակութենէն առաջացած յանուն անբարոյականացած կրօնի, մոլեռանդութեամբ հաստատուած աւազակային որջ մըն էր այդ ամբողջ հաստատութիւնն իր կազմակերպութեամբ:

ՊեՏ (Շարունակելի)

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

«Իրաւունք»ի խմբագրութեան. — Այս թերթին վերջին 59 թիւին մէջ «Ձրոյցներէ Ձգուչանայ» խորագրով գրուած մը ցոյց կուտայ թէ արհեստակցական գծուած հաշիւներ մինչեւ ո՛ր աստիճան կրնան կուրցնել ու խելայղել խմբագիր մը:

Ձէյթունէն եկած լուրը որուն համար կը խմբագրուի Շարժում, կը գրանուի նոյն իսկ Իրաւունքի 54 թիւին մէջ հեռուեալ կերպով.

«Ձէյթունը զրկուած չորս թնդանօթներու սոյլերուն, զորս գոմէշներ չեն կրցեր գտնիվել բարձրացնել, սեղաքի հայեր լծուեր ու սոյլերը քաշեր են երեք ժամ սեղ, մինչեւ զօրանոց: Ասոր համար հոն գիմաւորուեր են բարեւի կեցած զինուորներէն, Կարապետ եպիսկոպոսն, քահանայէն եւ երգեցիկ մանուկներէ: Բոլոր ներկաները բարեմաղթութիւն ըրեր են Սուլթանին երկարակեցութեան համար:

«Ճշմարիտ պատկեր» թուրքիոյ կեանքէն:»

Իրաւունք թէ խմբագրութեան արհեստը եւազմանութենէ բոլորովին տարբեր բուն է, բայց բնաւ չէինք կրնար գիտնալ թէ շահադիտական հակառակութիւն մը կրնայ ա՛ս աստիճան ծիծաղելի ընծայել մէկը:

Ճշմարիտ պատկեր իրաւունքի կեանքէն: Հիմա, կը հրաւիրենք Իրաւունքի ընթերցողները որ անգամ մըն ալ աչքէ անցունեն Շարժումի մէջ «Օրը Օրին» խորագրին տակ Ձէյթունի մասին գրուած յօդուածը, որուն մէջ մեր հերոս լեռնականներուն կեանքը զիւրացնուած ու ներքողուած էր այնքան պերճախօս կերպով:

Եւ մենք համոզուած ենք թէ Իրաւունքի ընթերցողները աւելի լաւ կը մըրեն մեր գրածը քան յիշեալ թերթին խմբագրութիւնը:

Ք Ր Ո Ն Ի Կ

Ռուսահայ Յովհ. Խուզողեանի բարեգործական նպատակի համար կուտակած 112,000 ռուպլին սոկոսները սրոնք սարեկան 6000 ռուպլի գումար մը կը կազմեն, պիտի յատկանան որբանոցի մը որ պիտի հաստատուի կովկասի մէջ:

«Արարատ» կը ծանուցանէ թէ Սինոզը՝ Վրաստանի եւ Իմբրեթի թեմին (Թիֆլիզ) կոնսիստորիաի գրաւոր դիմումին վրայ որոշեք է ծանուցանել Ռուսիոյ հայոց բոլոր հոգեւոր իշխանութիւններուն թէ կաթողիկ, բողոքական, ասորի եւ հայէջ հասարակութիւնաց խնդրանքին համաձայն, արտօնուած են կա-

տարել անոնց հոգեւոր պէտքերը:

«Պոսթոնի հայերը 25 տուար հանգանակեր են իրենց մէջ ի նպատտ ամերիկացի կամաւորներուն, որոնց համար հանգանակութիւն բացուած է:

Սմբղանտի թուրքերն ու հրեաները ինքնաբերաբար 2911 ռուպլի հաւաքեր են ի նպատտ Անտիժանի իսլամ սպասարարութեան առթիւ սպանուած ռուս զինուորներու ընտանիքներուն: Փայլուն նմուշ մը ցած շողորթութեան:

Պոլսէն «Մշակ»ի գրուած թղթակցութիւն մը կըսէ թէ Սիւսի կաթողիկոսութեան գործը կառավարութեան ուղածին պէս պիտի վերջանայ եւ Դուռը դադարի կերպով բանակցութեան մէջ է եզեր Մեքիսեղեկ եպիսկոպոսի հետ, որ պիտի ստանձնէ յիշեալ կաթողիկոսութիւնը: Յաւալի է որ եկեղեցականներ շատ անգամ գործիք կը դառնան օտարին մեքենայութիւններուն եւ անոր ոտնձգութեանց ազգային դարաւոր իրաւունքներուն վրայ:

Յուլիս 16ին Էջմիածնէն ճամբայ ելեր են Մաղաքիա եպիսկոպոս Տէրունեան եւ Սահակ եպիսկոպոս Այվատեան. առաջինը, ինչպէս յայտնի է, նշանակուած է Թէհրանի եւ Հնդկաստանի առաջնորդ, իսկ երկրորդը Արարատականի:

«Արեւելեան Մամուլի» խմբագրապետ Պ. Մամաթէոս Մամուրեան Իզմիրի ազգ. երկսեռ վարժարանին անօրէն կարգուեր է:

Արմաշի դպրեւանքին բարձրագոյն կարգի 5 սաները ուրոնք այս միջոցին Պոլիս կը գտնուին, սարկաւազ պիտի ձեռնադրուին:

Պատմամայի Հայք գիւղի եկեղեցիին սեպհականութիւնը եղող քարահանքերը վտանգի տակ կը գտնուին. շահագործուելու համար Պ. Քարապէլաի վարձու տրուած ըլլալով, այս մարդ թէ կանոնաւորապէս կը վճարէ վարձքը, սակայն լոկ իբր «նուէր», քարահանքերը իր ստացուածքը նկատել ուղելով: Պատրիարքարանը ստանձնեք է այս գործին պաշտպանութիւնը:

Իզմիրի հայ երեւելիներէն Եսայեան Եսայիի սպանման մասին նոր տեղեկութիւններ կը հաղորդուին: Աս մարդուն ազգականներէն մէկը կասկածելով որ անիկա կտակ մը պատրաստած է իրեն համար, անոր շուտ տիրանալու փափագով երկու մարդասպաններ կը վարձէ եւ անոնց ձեռքով սպանել կուտայ իր հարուստ ազգականը: Հիմա սպանիչները ամէն բան ի ստովաներ են: Իսկ շնորհալի ազգականն ալ այժմ ֆարիզ կը գտնուի եղեր:

«Արարատ» ամսագիրը կը հաղորդէ թէ Ռուսիոյ սովետներուն նպատակ մասնաժողովը դիմեր է Էջմիածնի հայոց Սինոզին խնդրելով որ դրամական նպատան հանգանակէ սովետանշներուն համար: Սինոզը պատուիրեր է Ռուսիոյ հայոց կոնսիստորիային հրաւեր կարգալ հայ ժողովրդեան օգնելու երաշտութեան երեսէն փաստած ռուսերուն եւ հանգանակուած գումարներն հասցնել մասնաժողովին: Իբր թէ մենք Հայաստանի մէջ հաղարներով սովետանշներ չունենայինք:

Իրիւշանի մէջ, դպրոցներու տեսուչ Եակիմով հրաւիրելով երէցփոխն ու քանի մը անձեր, եւ ոստիկանութեան ներկայութեանը, ցուցակագրեր է հայոց փակուած դպրոցի շէնքն ու գոյքերը: Ռուսաստանը եղէք:

«Տէյլի Նիւզ» հետեւեալը կը գրէ. — «Այս վայրկենիս հայկական խնդիրը աւելի յուսալից վիճակի մէջ է քան սակէց առաջ: Բայց թշուառ հայ ժողովուրդն իր ընկերական կանոնաւոր դրութեան դարձնելու համար անհրաժեշտ է որ հանրութիւնը շարունակէ հետաքրքրուիլ անոր բարեկեցութեան խնդրով: Այս պատճառով շուտով տեղի պիտի ունենայ ժողով մը կազմուած անգլիական այն ընկերութիւններէն որոնք կաշխատին ամօքել հայոց թշուառութիւնը:

«Ժողովը տեղի պիտի ունենայ Քարտիֆի մէջ, սեպտ. 23ին եւ 24ին: Պ. Ճէյմս Պրայս, որ այնքան շերմապէս կը շահագրգռուի հայերով, պիտի նախագահէ ժողովին. արձանագրուած են նաեւ ազգեցիկ անձանց անուններ՝ փոխ-նախագահութեան եւ յանձնաժողովի անդամակցութեան համար: Բրոք. Ռամսէյ, որ աշեւելքէն նոր դարձաւ, եւ Պ. Էտուարդ Միլուարտ որ վերջերս այցելեց Հայաստանի այն տեղերն ուր կը գտնուին ամերիկացի միսիոնարներ, պիտի տան ժողովին վերջին տեղեկութիւնները: Հայերու բարեկամներուն վերջին ժողովը տեղի ունեցաւ Լոնտոնի մէջ 1897ի մայիսին: Հ. Մուրօ Ֆէրկիւսըն եւ բրոք. Գոնվէյ յանձն առած են տեղեկութիւն տալ յաշորդ ժողովի կազմութեան եւ ծրագրի մասին»:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐՈՒՆ

Բաժնեգին ստանալու համար մեր բաժանորդներուն յաճախակի հրաւերներ ուղղելէ միշտ խորշած ենք. բայց ահա Ա. վեցամսեան բոլորեցինք, ու դեռ մեր բաժանորդներուն մէկ կարեւոր մասը չի փութար իր պարտքը վճարել: Հասկցողին համար այսչափը բաւական կը կարծենք:

—)(—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

ՄԱԿԵՂՈՆԻԱ

Պուլկարիոյ մակեդոնացիներուն ժողովը, որ վերջերս տեղի ունեցաւ Սոփիայի մէջ, Պ. Քաւաչոֆի նախագահութեան ներքեւ, քուէարկեց յիշատակագիր մը որ պիտի ուղղուի Պերլինի դաշնագիրն ստորագրող տէրութիւններուն և որ պիտի պահանջէ Մակեդոնիոյ ինքնավարութիւնը՝ Սուլթանին գերիշխանութեանը ներքեւ :

Այս յիշատակագիր խմբագրուած է մակեդոնական կեդրոնական քոմիտէի «բարենորոգման» ծրագրի հիման վրայ, որ վաւերացած է Սոփիայի մակեդոնացիներուն վերջին ժողովէն՝ 1896 նոյեմբերին, այսինքն հետեւեալ կէտերուն համեմատ .

1. Կազմութիւն Մակեդոնիոյ միակ նահանգի մը, որ պարունակէ Սելանիկի, Մանասթըրի և Իւսկիւպի երեք նահանգները, Սելանիկը իբրև գլխաւոր քաղաք :

2. Անուանում ընդհ. կառավարչի մը որ պատկանի նահանգին տիրող կրօնքին ու ազգայնութեան :

3. Ընտրութիւն նահանգային ժողովի մը որ պիտի ընտրուի 45 :

4. Կազմութիւն նահանգային զինուորական մարմնի մը :

Ժողովը Մակեդոնական կեդրոնական քոմիտէին ձգեց ընտրութիւնն այն վայրկեանին ուր այս յիշատակագիր պիտի կրնայ յաջողութեան հաւանականութեամբ մը ներկայացուի մեծ տէրութեանց, և մասնաւորապէս հաւանութեամբ պուլկար կառավարութեան, որ այս միջոցին՝ յարևանում ուս կառավարութեան բաւական յոռի տրամադրութեան մէջ կերեւնայ ի մասին մակեդոնական շարժումին :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

«Սթանտարտ»ի վիէննայի թղթակիցը կը ծանուցանէ թէ վէճ մը ծագած է Դրան և հանրային պարտքի վարչութեան միջև :

Ասկէց առաջ թուրքիա Գերմանիոյ պանքսէն ստացաւ 300,000 օսմ. ոսկիի փոխառութիւն մը . այս փոխառութիւն, հանրային պարտքի վարչութեանէն երաշխաւորուելով, Ռուսիոյ պատերազմական տուգանքը վճարուելու պիտի յատկացուէր : Հիմակ Դուռը կը ջանայ մէկ միլիոն օսմ. ոսկինոց ուրիշ փոխառութիւն մը ձեռք բերել . բայց յիշեալ վարչութիւնը կը մերժէ երաշխաւորել զայն, հակառակ Դրան թախանձանքներուն : Մեծ կարծրութիւն սպառնացեր է ամէն յարաբերութիւն խզել հանրային պարտքի վարչութեան հետ :

—Փրանսացի Սքիցըր դեղապետը ձեռք առեր է Գաննարի միջազգային վերին հրամանատարութիւնը՝ իտալացի հրամանատարին տեղ :

—Քրիստոնեաներու հրոսախումբ մը Գաննաէն քիչ հեռու յարձակեր է իսլամի մը վրայ և սպաներ է զայն : Յետոյ գրաւեր է ոչխարներու հօտ մը : Իսլամները վրէժ լուծելու համար, քրիստոնեայ գեղացի մը խողխողեր են :

—Փրանսացի երկու սպայ և 40 զինուոր կրէտէ հասեր են կղզիին կարգապահութեանը հսկելու համար :

—Ռուսաւոր վիլհելմին հետ երուսաղէմ պիտի ընկերանան 11 եպիսկոպոս, երկու զօրավար, 16 սպայ, և բազմաթիւ զրագէտներ ու օրագրողներ, նոյնպէս շատ մը վաճառականներ, բժիշկներ, սեղանաւորներ, Հետեւորդներու աս ճոխ թափօրը քիչ մը շատկէկ չէ՞ իր հաճոյքին համար ճամբորդող պարզ ուսուսուորի մը :

—Պոլսի մէջ ահագին պատրաստութիւններ կը կատարուին վիլհելմը ընդունելու համար : Գերմանիոյ մէջ օրուան խնդիրն է վիլհելմի՝ Սուլթանին հետ ունենալիք տեսակցութեան հետեւանքները, որոնց մեծ կարեւորութիւն կը տրուի :

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Վերջապէս լուսին թնդանթ և հրացան, ու խաղաղութիւնը վերահաստատուեցաւ :

Ահաւասիկ պարունակութիւնը խաղաղութեան յիշատակագրին .

1. Սպանիա պիտի հրաժարի Քուպայի վրայ ու կէ գերիշխանութենէ և ամէն իրաւունքներէ :

2. Սպանիա Մ. Նահանգաց պիտի թողու Ռոսթոմի քաղաքը և միւս կղզիները որք այժմ կը գտնուին Սպանիոյ գերիշխանութեան տակ Անթիլեաններուն մէջ, ինչպէս նաեւ կղզի մը Լատրոն արքեպիսկոպոսին մէջ, ինչպէս որ ուզեն Մ. Նահանգները :

3. Մ. Նահանգները պիտի գրաւեն ու վար զենն Մանիլա քաղաքը, ծովախորշն ու նաւահանգիստը մինչև որ կնքուի խաղաղութեան դաշնագիր մը որ պիտի որոշէ Փիլիպպեաններու կառավարութեան եղանակն ու քոնդուրը :

4. Սպանիա անմիջապէս պիտի պարպէ Քուպան, Ռոսթոմի քաղաքը և Անթիլեաններուն մէջ այժմ Սպանիոյ գերիշխանութեան տակ գտնուած կղզիները : Հետեւապէս, երկու տէրութիւններէ իւրաքանչիւրը՝ այս յիշատակագրին ստորագրութենէ ետք մինչև տասն օր քոմիտէներ պիտի ընտրէ և այս կերպ ընտրուած քոմիտէր-

ները պարտին յիշատակագրին ստորագրութենէն ետք մինչև երեսուն օր հաւաքուիլ Հավանայի մէջ՝ համաձայնելու համար Գուպայի և յարակից սպանիական կղզիներուն պարպուելու պարագայից գործադրութեան վրայ, և իւրաքանչիւր կառավարութիւն նոյնպէս ստորագրութենէն ետք տասն օրուան մէջ ուրիշ քոմիտէներ պիտի կարգեն որոնք յաջորդ երեսուն օրերուն մէջ պիտի հաւաքուին Սան-Ճուանի (Քուսթո-Ռի.քո) մէջ, համաձայնելու համար Ռոսթոմի քաղաքի և Անթիլեաններու միւս սպանիական կղզիներուն պարպուելու պարագայից վրայ :

5. Սպանիա և Մ. Նահանգները նաեւ պիտի անուանեն հինգական քոմիտէներ, խաղաղութիւնը պայմանադրելու համար : Ասոնք ամէնէն ուշ 1898 հոկտ. 1ին պիտի հաւաքուին Բարիլ և պիտի ձեռնարկեն խաղաղութեան դաշնագրի մը կնքման :

6. Այս յիշատակագիր ստորագրուելուն պէս թշնամութիւնք պիտի դադրին և ասոր համար երկու կառավարութիւնները շուտով հրամաններ պիտի զրկեն իրենց ծովային ու ցամաքային զօրութեանց հրամանատարներուն :

Մատրիտէ կը հեռագրուի թէ Քուպայի սպանիական զօրաց ընդհանուր հրամանատար զօրավար Պլանքո իմացուցած է հրաժարիլը, ըսելով որ չի կրնար վարել Քուպան պարպելու գործը : Նոյնպէս հրաժարեր և նոյն իսկ ճամբայ ելեր է Փիլիպպեաններու սպանիական բանակին հրամանատար զօրավար Պլանքո, իր պաշտօնը երկրորդականներու թողով :

—Հոնգ-Գոնկէ կը հեռագրեն թէ Ամբերիկացիք ուրեւի՞տ են Մանիլան և արուարձանները, Քաղաքը անձնատուր եղեր է՝ առանց փաստուելու :

—Թշնամութիւնները դադրած և պաշարուած ամէն կէտի վրայ վերցած ելլալով, ամէն ազգի առեւտրական նաւեր կրնան ազատօրէն մտնել ելլել Քուպայի և Ռոսթոմի քաղաքի նաւահանգիստները : Ամբերիկ. նաւահանգիստներէն փութով պաշարաբարձ նաւեր ճամբայ կելլան : Վասնզի թէ և Մ. Նահանգները՝ ըստ յիշատակագրի՝ պարտաւոր չեն նպատ հասցնել սպան. զօրքերուն, մարդասիրութիւնը չի ձգեր իրենց սակայն որ Քուպայի սպանիացիները սովամահ թողուն : Եւ ապա կը մտածեն որ եթէ ուտեստ տան սպան. զօրքերուն, կառավարութիւնը յետոյ փոխարժէքը պիտի վճարէ իրենց :

—Պատերազմին երեսէն Մ. Նահանգներուն կրած փասն է 150 միլիոն տոլար : Մինչդեռ

Խորհրդարանը մինչև առաջիկայ յունուարի համար 360 միլիոն տոլար քուէարկած էր :

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Ռուսիա գաղթող պուլկար սպաները, թուով քառասունը ութը, ի մօտոյ պիտի վերագրուին պուլկար բանակին մէջ, բացի վեցէն որոնք յանցաւոր ճանչցուած են : Անոնցմէ չորսը անցեալ տարի պուլկար բանակը վերագրուած էին, ուրիշ տասներեք սպայ տարւոյս սկիզբը, քանի մը շաբաթ ետքն ալ մնացած քսանը հինգը :

—Թէ հրանէն կը հեռագրեն թէ սպառնացող ամբոխ մը ժողովուր է Ռուսիոյ հիւպատոսարանին առջև և հաց ուղեր է : Երկուները գոցուեր են :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տօնչօ Նիքոլօֆ իր խորին շնորհակալիքը կը յայտնէ տօքթ. Մկրտիչ Վարդանեանի որ իր ճարտարութեամբ բուժած է իր մէկ յոյժ ծանր և վտանգաւոր հիւանդութիւնը :

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կուզէ՞ք վաճառուան լաւ պաշտօնեայ մը . գիմեցէք Եւրօպայի խմբագրութեան, որ ցոյց կուտայ հայ երիտասարդ մը որ ինք տարիէ իվեր կառավարական պաշտօն կը վարէ եւ ստամարակալութեան ճիւղին համար վառնայի առեւտրական գրասենեկէն վկայուած է :

ՎԱՐՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՔՈՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ) —(—) (Գին 1 Ֆրանկ) (—)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Եւրօպայի խմբագրատունը, Ֆիլիպպէ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք Հայկ Մալախեանի սրճարանը, Սօփիա Տ. Մուշեղ Արծրունիի քով :

Մօտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Ռուսութեան գրչները» :

Ն. ՍԻՍԱԿԱՆ

Նկարիչ-Լուսանկարիչ

Պատիւ ունի ծանուցանել արգել հասարակութեան թէ Տօպրիչի մէջ լուսանկարչատուն մը հաստատած է ուր բացի ամէն մեծութեամբ լուսանկարներէ, կը պատրաստէ նաեւ իւզաներկ եւ գարաքալէմ պատկերներ :

Այլ և այլ քաղաքներէ անոնք որ կը փափաքեն իրենց իւզաներկ կամ քարաքալէմ պատկեր ունենալ, փափկութեամբ եւ ճշգրիտ նմանութեամբ գծուած, թող փութով զրկել իրենց լուսանկարը յիշեալ լուսանկարչատունը : Գիններ յոյժ չափաւոր : 5—10

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալա, թահմիլ Կէօլիպէօլի քաղաքի խանութը, եւ Ապտիլբարանի մզկիթին դէմը հայկական գրատունը, Ա. Զարրահանէլեանի քով :

Печанница «Взаимность» Варна.